



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

08.08.2014թ.

**Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ
ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հարգարժա՛ն շինարարներ

Ձերմոտեն շնորհավորում եմ մասնագիտական տոնի կապակցությամբ և մաղթում, որ առանցքային կարևորություն ունեցող Ձեր գործունեությունն ընթանա միմիայն դրական զարգացումներով:

Բոլոր ժամանակներում շինարարի աշխատանքն իր ողջ բնույթով և տրամաբանությամբ պահանջել է մեծ պատասխանատվություն և անսահման նվիրում:

Վստահ եմ, որ այս ասպարեզի արդիական պահանջներն ու ժամանակից մոտեցումները նոր լիցքեր են հաղորդել տարիների՝ Ձեր փորձառությանը:

Հայ շինարարը մշտապես ունեցել է իր ուրույն մտածողությունն ու ինքնատիպ ոճը՝ յուրովի առանձնահատկություններ հաղորդելով իր կողմից կառուցվող ամենատարբեր կերտվածքներին:

Կրկին շնորհավորելով տոնական օրվա կապակցությամբ՝ ցանկանում եմ, որ այսուհետ ևս Ձեզ ուղեկցեն հաջողություններն ու նորանոր առաջընթացները:

Հարգանքներով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ